Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ

2023 թվականի 13 հոկտեմբեր

N 722 - Ն

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարար

2023 թվականի 27 հոկտեմբեր

N 255 - Ն

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N 178-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 66-Ն ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 17-ի N 178-Ն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2018 թվականի մարտի 19-ի N 66-Ն «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանի N1 հավելվածով հաստատված՝

1) Ձևի «ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ» աղյուսակում 5-րդ տողից հետո լրացնել 6-րդ տող՝ հետևյալ բովանդակությամբ.

«

6. Հիդրոէներգետիկ նպատակով										

».

2) «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ» 13-րդ կետի 1-ին ենթակետի 1-ին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Օրենսգրքի 214-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում [8.2] սյունակում լրացվում է ջրօգտագործման թույլտվությունով սահմանված ջրօգտագործման ծավալը՝ հաշվարկված եռամսյակի համար:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Ռ. ԲԱԴԱՍՅԱՆ **Հ. ՍԻՄԻԴՅԱՆ**